ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋԸՆԹԱՑ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ
ՂԵԿԱՎԱՐ ԱՐԱՄ ԹՈՐՈՍՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Թորոսյան,

Ի պատասխան Ձեր 14.11.2023թ. գրության՝ տեղեկացվում է, որ Ղափանցյան փողոցի հ.1/25 հասցեում բնակելի տան կառուցման շինարարական աշխատանքներն իրականացվում են համակառուցապատողներ Արթուր Առաքելյանին և Մոնիկա Գրիգորյանին Արաբկիր վարչական շրջանի ղեկավարի կողմից 12.10.2023թ. տրված հ.172 շինարարության թույլտվության և 12.10.2023 թվականին համաձայնեցված հ.25/01-Դ-121857-23 նախագծի համաձայն:

Միաժամանակ տեղեկացվում է, որ կառուցապատողները բանավոր զգուշացվել են կառուցման շինարարական աշխատանքների ընթացքում հաստատված նախագծային փաստաթղթերի պահանջներով առաջնորդվելու և շինարարական հրապարակը նախագծային պահանջներին և Երևան քաղաքի ավագունու կողմից 16.03.2012թ. ընդունված հ.405-Ն որոշման պահանջներին համապատասխան կազմակերպելու վերաբերյալ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ